


3-3635a

Հ Ր Ա Հ Ա Ն Գ  
ԳԱՐԱԱՆ-ԱՄԱՌԱՅԻՆ ԾՆՆԴԻ ԺԱՄԱՆԱԿ  
ԽՈՃԿՈՐՆԵՐԻՆ  
ՊԵՀԵԼՈՒ ՅԵՎ ԱՇԵՑՆԵԼՈՒ ՄԸՆԻՆ



22826

ԳՅՈՒՂՋՐԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՅԵՀ-ի ԺՈՂԿՈՄԽՈՐՃԻ և Հ. Կ. (բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ 1933 թ. ԱԿՊՄԵՐԵՐԻ 11-ի «ԱՆԱՍՆԱՎԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԱԳՄԱՆ ՃԵՌՆԱՐԿՈՒՑԵՐԻ մասին» վորոշման մեջ խնդիր եղած առավելագույն չափով նվազեցնելու անասունների անկումը և ապահովել մատղաշի պահպանումը խորհուտեսություններում և կոլտնտեսություններում՝ ընդլայնված վերաբարերության համար:

Սոցիալիստական անասնավահության զարգացման ներկա ետապում հոտի ընդլայնված վերաբարերության ապահովման աշխատանքները և հոտի վրա կական ցուցանիշների բարձրացումը խորհուտեսություններում և կոլտնտեսություններում հանդիսանում է նրանց բուծունելության կենտրոնական խնդիրը:

Հոտի ընդլայնված վերաբարերության հարցի լուծումն ապահովող միջոցառումների կարեռագույն խնդիրներից մեկը հանդիսանում է խորհուտեսությունների և կոլտնտեսությունների սեփական ամբողջ աճի բուծումն ու մատղաշների խնամքի ապահովումը:

Դրա հետ միասին կոլտնտեսական անասնավահության ընդլայնված վերաբարերության համար անհրաժեշտ ե, վոր պահպանվի նաև կոլտնտեսականների անձնական ոդտագործության տակ գտնված անասունների մատղաշը:

Մատղաշի բուծումն և մատղաշների պահպանումն որինակելի հիմքերի վրա դրված տասնյակ և հարյուրավոր կոլտնտեսությունների կողքին մենք ունենք նաև մի շարք կոլտնտեսություններ, վորտեղ այդ կարեռագույն աշխատանքը մատղած ե ինքնահոսի և վորի հետևանքով հոտի ընդլայնված վերաբարերության տեմպերը չեն բավարարում պրոլետարական պետության պահանջներին:

Վորն ե մի շարք կոլտնտեսություններում մատղաշի բուծման ու պահպանման հետամնացության գլխավոր պատճառը:

Մեր սոցիալիստական անասնավահության զարգացման տվյալ ետապում հիմնական ե առավել բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է այն, վոր կոլտնտեսական լայն մասաւանները բավականաշափ չեն տիրապետում զոռակի խնդիրներին, վոր նրանք չեն տիրապետում մատղաշի (հորթերի, գառների, խոճկորների) ուցիոնալ դաստիարակության և բուծման տեխնիկային, վոր նրանք բավականաշափ ճիշտ չեն կարողանում կազմակերպել սոցիալիստական անասնավահության արտադրական պրոցեսը և կուլտուրական ձևով կառավարել սոցիալիստական անասնավահական տնտեսությունը:

ԽԿԲ. №

Պատ. խմբագիր՝ Ս. Խառհալյան  
Տեխ. խմբագիր՝ Պ. Սարոյան  
Երբագրիչ՝ Սոս Հակոբյան  
Հանձնվել և արտադրության 1933 թ. դեկտ. 3-ին  
Ստորագրված և տպագրելու 1933 թ. դեկտ. 15-ին  
Պատվիր № 536 Գլավլիս 8954 Տիրաժ 1000  
Տերեփքն, ԳՅՈՒԴՐՄԸ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ № 50

Հետամնաց, մանր-գյուղացիական տնտեսությունից մնացած այդ ժառանգությունն այժմ հանդիսանում է կոլտնտեսական անասնապահական ապրանքային ֆերմաների կազմակերպչական տնտեսական աշխատանքների գլխավոր խոչնդուսներից մեկը, մասնավորապես մատղաշի բուժման և նրանց պահպանման կազմակերպման վորակի բարձրացման բնագավառում:

Հենց աշխատանքի այդ բնագավառումն ե, վոր թշնամին, հակակոլտնտեսական տարրերը փորձում են դիմադրություն ցույց տալ և խանդարել մեր հաղթական առաջընթացը:

Դրա համար ել սոցիալիստական անասնապահության բնագավառումնոր տեխնիկայի յուրացումը, մասնավորապես սեփական աճի՝ մատղաշների պահպանման ռայդիոնալ կազմակերպումը, վոր պահովվելու յի սոցիալիստական հոտի ընդլայնված վերարտադրությունը՝ այժմ հանդիսանում ե դասակարգային պայքարի կենտրոնական ասպարեզը գյուղում:

Ներկայումս անասնապահության բնագավառում նոր տեխնիկայի տիրապետման աշխատանքները կոլտնտեսականների և կոլտնտեսությունների ավելի ու ավելի լայն մասսաներ են ընդգրկում:

Կոլտնտեսություններում, սոցիալիստական անասնապահության տեխնիկայի տիրապետման վերաբերյալ բարձրորակ անասնապահության սրբողների խմբակների ծավալվող լայն ցանցը հանդիսանում է ընկեր ՍՏԱԼԻՆԻ առաջավոր տեխնիկայի արտադրության մասին ցուցումների իրացման ամենալավագույն արտահայտությունը:

Մատղաշների (հորթերի, գառների և խոճկորների) բուժման և խնամքի տեխնիկայի մասին այս հրահանգը, հաստատված չողողովումատի կոլեգիայի կողմից, նպատակ ունի անասնապահության ասպարիզում աշխատող յուրաքանչյուր առաջազոր կոլտնտեսականի և կոլտնտեսունու ձեռքը տալ մատղաշի բուժման ու պահպանման տեխնիկայի և կազմակերպչական-տնտեսական աշխատանքների վերաբերյալ գիտական հանրամատչելի մի գրքույկ:

Ենորհիվ այս աշխատանքի և կոլտնտեսությունների բարձր յեկամտաբերության այս և հետագա տարիներում այս հիման վրա կոլտնտեսականների և կոլտնտեսունների արտադրական ակտիւթյան բարձրացումով, քաղաքինների զեկավարությամբ խթանելով ավելի ազնիվ ու նվիրված կոլտնտեսական մասսաների ինքնագործունեյությանը և իրականացնելով հոտի բազմացման ու ապրանքային արտադրանքի արտադրական պլանները՝ ձեռք կը բերին նոր ու անհախնենթաց հաղթանակներ սոցիալիստական անասնապահության բարձրացման և նրա ընդլայնված վերաբերման ասպարիզում:

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

40685 - 63

## I. ՀՂԻ ՅԵՎ ԾԾՄԱՅՐ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

**Խոզանոցներ.** 1. Խոզանոցը պետք է լինի չոր և լուսավոր: Սա առաջին կարևորագույն պահանջն է, վորվհետև խոնավ և մութ խոզանոցը վոչչացնում է խոզերին: Խոզանոցում, միջանցքների և բների հատակները, ինչպես և պատերն ու առաստաղը, պետք է լինեն չոր և մաքուր:

2. Ծծմայր մերունների և խոճկորների համար խոզանոցը պետք է լինի տաք: Անկախ դրսում յեղած ջերմաստիճանի դրությունից, խոզանոցի ջերմաստիճանը պիտի լինի հավասարաչափ: Այդպիսի խոզանոցում, հատակից մեկ մետր բարձրության վրա, պետք է լինի C 10—12<sup>0</sup> ջերմություն:

3. Խոզանոցում ողը պետք է լինի մշտական մաքուր և թարմ: Տոթը խոզանոցում, փչացած ողը նրա մեջ՝ թուլացնում և թռւնավորում են խոզին:

Վորպեսզի խոզանոցում լինի թարմ, մաքուր ող, պետք է շարունակ հսկել ողափոխող խողովակների վրա և անհրաժեշտության դեպքում նրանց բացել և փակել: Բացի դրանից, խոզերի և խոճկորների զրոսանքի ժամանակ, յերբ խոզանոցում կենդանիներ չկան, պետք է ողափոխել խոզանոցը՝ բանալով դրա համար լուսամուտները կամ դռները:

Առանձնապես ոգտակար ե լուսամուտները բացել արեւոտ կողմից՝ լավ և պարզ յեղանակներին:

**Խոզերի** 4. Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ խոզերին մաերումը. մաքրել խոզանակներով կամ վոլորտծ ծղնոտով: Խոզերի և խոճկորների վրա պարագիտներ (վոչիներ) յերեան գալուց, պետք է խոզերին ոճել անմշակ նավթով, ուենավթով, մազութով, վերամշակված ավտոլով, նավթի հետ խառնած (1 մաս նավթին 10 մաս մազութ, ալեռնավթ կամ անմշակ նավթ և այլն): Յեթե խոզերը պարագիտով վարակված են շատ ուժեղ չափով, ոժումը պետք է կրկնել յուրաքանչյուր 10—15 որը մեկ անգամ, վորվհետեւ այդ ժամանակամիջոցում խոզի մազերի վրա գտնվող ձվաներից դուրս են գալիս մանր վոչիները:

**Խոզերի** 5. Խոզերը պետք է ապահովված լինեն չոր թամբարով: Կամֆարը, ՔՆԵԼՈՒ համար չամար չոր, փափուկ և տաք բունը խոզի նշանակություն ունի կենդանիների պահանձան և կերը տնտեսելու տեսակետից: Խոզերի պառկելը

թաց, խոնավ ցամքարի և ցուրտ հատակի վրա (բետոնից, քարից, սպալտից), վասում ե կենդանիներին: Դրա համար անհրաժեշտ ե ցուրտ հատակ ունեցող բների հատակը ծածկել տախտակով՝ բնի տարածության  $\frac{1}{2}$ -ի վրա:

Բները մաքրելուց պետք ե դուրս թափել միայն թաց և կեղտոտ ցամքոցն ու գոմաղբը, իսկ չոր ցամքոցը պետք ե քրքրել և նրան ավելացնել չոր, թարմ ցամաքոց, նրա համար, վորպեսի աստիճանաբար կուտակվի մատրաց և բունը դարձնել փափուկ և տաք: Խոզերի համար ավելի ոդտակար ե, յեթե ցամքոցը կուտակվելով դառնում ե հաստ, չոր և փափուկ մատրաց: Հիվանդություն առաջ գալու դեպքում պետք ե ամրող ցամքոցը փոխել:

Հարդէ պակաս լինելու դեպքում դրանով առաջին հերթին պետք ե ապահովել ծնող և խոճկորներ ունեցող ծծմայր մերուներին: Հղի և վոչ հղի մերուների համար պետք ե ոդտագործել ցամքոցի այլ տեսակները (տորֆ, տերև, յեղեգն, փայտի թեփկամ ձահճախոտ և այլն):

**Մերուների թարմ, մաքուր ողում, արեի ձառագայթների տակ, զբասելը.** Նույնիսկ ձմեռ ժամանակը, իսկ առավել ևս ձմեռվավերջերին, յերբ վրա յեն հասնում պայծառ, արևոտ որերը, զբուսանքը մեծ նշանակություն ունի խոզերի առողջության ամրապնդման համար:

**Առանց զբուսանքի չի կարելի մերուներից ստանալ ամուր և առողջ խոճկորներ:** Զբոսանքի տեռողությունը պետք ե լինի կես ժամից մինչև 2 ժամ և ավելին՝ նայած յեղանակին:

Ճանապարհների անանցանելի դառնալուց, յերբ փարախում ցեխ և լինում, խոզերին պետք ե ման ածել դաշտում բարձր, ձյունից ազատված և չորացած վայրերում: Սառած և սայթաքուն ճանապարհներով խոզերին չպետք ե քշել:

**Ամառային շրջանում ինչպես խոզերին (հղի և ծծմայր) նույնպես և խոճկորներին պետք ե պահել արոտավայրերում:** Խոճկորներին արոտին պետք ե սովորեցնել աստիճանաբար՝ սկսած 10 որական հասակից՝ դուրս թողնելով նրանց տաք ժամանակը, առաջին որերին 10—15 րոպեյից վոչ ավել: Խոզերի համար ամենալավ արոտավայրն են հանդիսանում յերեքնուկի և առվույտի ցանքերը, բայց հաջողությամբ կարող են ոդտագործվել նաև թիթեռնածաղկի և այլ խոտերի ցանքերը, ինչպես և բնական արոտավայրերը:

### III. ՀՂԻ ՄԵՐՈՒՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Կերակրելուց միշտ պետք ե հետեւ, վորպեսզի մերուները լինեն լավ տոհմական մարմնի մեջ և թույլ չտալ ինչպես մերուների ճարպակալման, նույնպես և նրանց նիհարելուն ձարպակալած և նիհար մերուները տալիս են թույլ խոճկորներ և նրանց վատ են կերակրում:

2. Հղի մերունների որաբաժինը պետք ե բաղկացած լինի դասական տեսակի և տնտեսության համար ամենամատչելի կերակրից:

Կանոնավոր կերակրման ժամանակ որաբաժնի անհրաժեշտ բաղադրիչ մասերը պետք ե լինեն թիթեռնածաղկիկ բույսերի խոտերը (առվույտ, յերեքնուկ, վիկա վարսակի հետ, սոյա և այլն) կամ զանազան տեսակի լավ դաշտային խոտերը, արմատապտղները և կարտոֆիլը կամ թե արմատապտղների փոխարեն լավ սիլոսը կամ մղոնքը (չօմ), քիչ քանակով խտացրած կերեր (ջարդած հատիկ, մնացորդներ, ալյուրի փոշի, թեփեր, քուսպեր) և հանգային խոտնուրդ: Լավ թիթեռնածաղկավոր և այլատեսակ խոտերի, արմատապտղների և սիլոսի պակասության դեպքում պետք ե այդ կերերի մի մասը փոխարինել դարմանի մղեղով (վարսակի, կտավհատի, յերեքնուկի, կորեկի): Խիստ յերկար ժամանակ մնացած կոպիտ խոտագիների խոտով կամ դարմանով կերակրելուց, սրանք պետք ե խաչին (բղով յեփել) և կերակրվեն խտացրած կերերի հետ խառն վիճակում, ընդվորում նախքան խացելը խոտը պետք ե մանրացվի: Լավ խոտով կերակրվում են մասամբ մսրից, խոզերի զրոսանքի ժամանակ, և մասամբ ել մանրացրած զրությամբ: Լավ ուտիվելու համար անհրաժեշտ ե խոտը մանր աղալ—դարձնել ալյուր, վորը կարելի յե կատարել հասարակ յերկանքի միջոցով, միայն անհրաժեշտ ե, վորպիսզի խոտը չոր լինի:

**Մերունների հղիության առաջին 3 ամիսներում նրանց որաբաժինը կարող ե կազմված լինել  $70^{\circ}/_0$  կոպիտ և հյութալի կերերից և  $30^{\circ}/_0$  խտացրած կերից (ըստ կերի միավորների):** 3 ամսից հետո կոպիտ կերի քանակն աստիճանաբար պակասեցվում ե և ծներուց 15 որ առաջ կոպիտ և հյութալի կերի քանակն աստիճանաբար հսկվում ե  $25—30^{\circ}/_0$ ի, իսկ խտացրած կերի բաժինն ավելացնում ե  $30^{\circ}/_0$ ի: Այդ ժամանակ որաբաժինը կազմվում ե այնպիսի կերերից, վրոնցով մերունները պետք ե կերակրվեն նաև ծնելուց հետո:

4. Հյութալի և կոպիտ կերերը տրվում են խտացրած կերի հետ միասին, թանձը խառնապուրի ձևով (արմատապտուղները նախորդք կտրտվում են, կարտոֆիլը յեփում կամ խաշվում ե):

5. Լավ վորակի սիլոսով մերուններին կարելի յե կերակրել յուրաքանչյուր մորը տալով որական 4—5 կիլոգրամ Ծնելուց 10—15 որ առաջ սիլոսի քանակը պակասեցվում ե և հասցվում մինչև 1,5—2 կիլոգրամ. ճնելուց 3—4 որ առաջ սիլոսն ամբողջովին հանվում է որաբաժնից:

6. Նեխված, բորբոսնած սիլոսը մայրերին տալ չի թույլատրվում, իսկ սառած սիլոսն անհրաժեշտ է կերակրելուց առաջ հալեցնելը:

7. Հանքային նյութերը տրվում են հետևյալ խառնուրդների ձևով.

	8 մաս:
ա) աղած կրաքար կամ կավիճ . . . . .	2 »
կերակրի աղ . . . . .	4 »
բ) աղած կրաքար կամ կավիճ . . . . .	4 »
վոսկրի ալյուր (այրված վոսկոր)	2 »
կերակրի աղ . . . . .	2 »

Այս կամ այն խառնուրդից մերուններից յուրաքանչյուրին կերերի հետ միասին որական տրվում է 30—40 գրամ, իսկ ինքնակերակրողների առկայության դեպքում ցանկացածին չափ: Ինքնակերակրողների մեջ ավելացվում ե նմանապես վառարանի մոխիր, ածուխ:

8. Ծնելուց 2—3 որ առաջ մերունների որաբաժինը վորոշ չափով պակասեցվում ե և նրանց տրվում ե խտացրած կեր՝ ջրիկ վիճակում, քիչ քանակով մանրացրած արմատապտուղների հետ միասին:

9. Ցրտահարված արմատապտուղները նախքան կերակրելը մանրացվում են և ապա յեփում կամ խաշվում:

10. Հղի մերուններին կարելի յե կերակրել որական 2 անգամ: Ծնելուց 10—15 որ առաջ պետք ե անցնել նրանց որական 3 անգամ կերակրելուն, կոպիտ կերերի շատության դեպքում (դարձան, խոտ) պետք ե բոլոր խոզերին կերակրել 3 անգամ:

### III. ԾՆՈՒՆԴՆ ԱՆՑԿԱՑՆԵԼԸ

1. Ծնելուց 10—15 առաջ մերունը տեղափորվում ե առանձինի մեջ: Բունը՝ մինչ այդ մեծ ուշագրությամբ մաքրվում ե: Նրա պատերը և հատակը լվացվում ե յեսման ջրով մոխաջրի

հետ միասին և սպիտակացնում ե թարմ հանգած կրով: Իսքը՝ մերունը փոխաղբախուց առաջ, մաքրվում ե և սրբվում ե կրեռլինի մեկ առկոսային լուծույթով ներծծված շղողի: Յեթե մերունների վրա կան վոչիներ, ապա փոխադրելուց առաջ նրանց պետք ե մաքրել այդ պարագիտներից, վերևում ցույց տրված ձևով:

2. Մերունի հետ պետք ե վարպետ մեղմ և սիրալիր, վորպեսպի նա ընտելանա և խնամողից չվախենա: Կուրծը մըսեցնելուց խուսափելու համար անհրաժեշտ է, վոր մերունը պառկի չոր և փափուկ փովածքի վրա: Պետք ե զննել մերունի ծծերն ու կուրծը և բուժել ամեն տեսակի վերքերն ու ճանգուած տեղերը:

3. Ծնելուց առաջ պետք ե հսկողություն ունենալ, վորպեսպի մերունները փորկապություն չունենան: Յեթե մերունի կղկղանքը չափաղանց պինդ է, պետք ե նրան տալ լուծողական: Ծնելուց 5—6 ժամ առաջ մերունին չպետք ե կերակրել: Այդ ժամանակ նրան պետք ե տալ միայն խմելու ջուր:

4. Ծնելուց 2—3 որ առաջ և 5 որ հետո անհրաժեշտ է խոզանցում սահմանել ցերեկային և գիշերային հերթապահնություն, ընդդորում հերթապահը պետք ե ճանաչի այն բոլոր մերուններին, վորոնք այդ ժամանակամիջոցում պետք ե ճնեն:

5. Ծնելու ժամանակ մերունը պետք ե պառկի փափուկ և չոր փովածքի վրա: Ծնելուց հետո այդ փովածքը փոխարինվում է թարմով: Ծնված խոճկորներին խոզապահը վերցնում ե մորից և սրբում չոր և մաքրուր շղող սկսելով գլխից, ապա ձախ ձեռքի մատներով բռնում ե պորար, փորից 4—5 սմ. հեռավորության վրա, սեղմում այն, մաքուր մկրատով կտրում պորտի ծայրը՝ բռնած տեղից մի քիչ ցածր մասից և պորտի մնացող ծայրը քսում կրեռինի մեջ տոկոսային լուծույթի: Ծինը և սատկած խոճկորները հավաքվում են բնից և վոչնչացվում: Բոլոր ընդունված խոճկորները տեղափորվում են արկղի: մեջ՝ չոր, փափուկ փովածքի վրա և վերևից ծածկում այնպես, վորպեսպի մնա վոչ մեծ անցք (ճեղք): արկղի մեջ թարմ ող անցնելու համար:

6. Ծննդաբերությունը վերջանալուց, բայց նրա սկզբից հաշված 2 ժամից վոչ ուշ, իսկ յեթե խոճկորները թույլ են, ապա և շուատ, մոտավորապես ծնելուց մեկ ժամ հետո խոճկորներին ծծեցնում են: Յեթե խոճկորներն սկսել են լավ ծծել, ապա ամբողջ ժամանակը նրանց թողնում են մոր մոտ, իսկ յեթե խոճկորները թույլ են, ապա նրանց հավաքում են արկղի մեջ և բաց են թողնում մոր մոտ ամեն 1-2 ժամից հետո, վիշեր և ցերեկի:

Այսպես վարդում են մինչև խոճկորների ամբապնդվելը (2-3 որ): Առաջին անգամ ծծելուց առաջ մոր կուրծն ու ծծերը լվացվում են կրեոլինի 1 տոկոսանի գոր լուծույթով: Յերբեմն խոճկորները ծնվելու ժամանակ ունինում են շատ յերկար և սուր ատամներ: Այս գեղքում անհրաժեշտ ե այդպիսի ատամները կտրել ակցանով, բայց սա պետք է կատարել շատ զգուշությամբ և վարպետորեն և միայն բացառապես այն գեղքերում, յերբ մայրը տանջվում է կծելուց:

Հատուկ ուշադրություն պիտի գարձնել այն բանի վրա, թե արդյոք բոլոր խոճկորներն ել լմզ են ծծում մորը: Անհրաժեշտ և սգնել թույլ խոճկորներին հասնելու ծծերին և անպայման հետեւ զել, վորպեսզի նրանք կաթ ծծեն կուշտ կերպով:

Մերունի տակ պետք է թողնել այնքան խոճկոր, վորքան մերունը լավ գործող ծիծ ունի: Ավելարդ խոճկորներին պետք է տեղափորել այլ մերուների տակ, մոտավորապես նույն այդ շրջանում ծնված:

7. Ծնելու ժամանակ և նրանից հետո բնում մերունի մոտ պետք է գտնվի մաքուր ջուր՝ խմելու համար:

#### IV. ԾԾՄԱՅՐ ՄԵՐՈՒՆԵՐԻ ՑԵՎ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

1. Ծնելուց հետո 1-2 որը մերունին տալիս են վոչ շատ քանակով կեր (0,5 կիլոգրամ ցորենի թիկի և վարսակի ապուրի խառնուրդ) ջրի հետ խառնած զրությամբ: Կերաբաժինն աստիճանաբար շատացնում են և 5-րդ կամ 6-րդ որը մերունը փոխադրում են լրիվ որաբաժնով կերակրելուն:

2. Կանոնավոր կերակրման ժամանակ ծծմայր մերուների որաբաժինը պետք է կազմված լինի զանազան տեսակի կերեց: Ծծմայր մերունի կերաբաժինը պետք է պարունակի՝

ա) Թիթեռնածաղիկ խոտ—1-1½ կլզ: Խոտի բացակայության դեպքում, նրա փոխարեն արվում ե նույն քանակով լավ դարման՝ խաշած զրությամբ:

բ) Խտացրած կերեր—(ցորենի թեփ, հատիկների և հատիկային մնացրդների փշրանք, քուսպ):

գ) Արմատապալարապուղների փոխարեն ծծմայրերին կարելի յե կերակրել սիլոսով, բայց անպայման լավ վորակի, թարմ, սիլոսոյին հորից կերակրելու որը հանած, Սիլոսը արվում է մերուներին ծնելու 5-րդ որից 0,5 կլզ. չափով: Սիլոսի քանակն աստիճանաբար կա-

բող և սեկ մերունի համար որական ալիւացվել մինչև 1,5-2,5 կլզ., սակայն այս դեպքում անհրաժեշտ է հսկողություն ունինալ խոճկորների վրա և յեթե նրանց մոտ կառաջանա փորլուծություն, ապա սիլոսի տալը պակասեցնում են կամ բոլորովին դադարեցնում:

դ) Հանքային նյութերի խառնուրդը ծծմայր մերուներին տրվում է նույն բաղադրությամբ, ինչ վոր հղի մերուներին, յուշաքանչյուր գլխին որական 30-40 դրամ: Հանքային նյութերն ուրիշ կերի հետ խառն զրությամբ, նույնպես և ինքնակերակրողից և տաշտերից՝ տրվում են ցանկացածին չափով:

3. Ծծմայր մերուները միշտ պետք է ապահոված լինեն սենյակի բարեխառնություն ունեցող խմելու համար մաքուր ջրով: Զրի պակասությունն զգալի չափով իջեցնում է մերուների կաթնատվությունը և վնասում խոճկորներին:

4. Խոճկորներին ծծից կտրելուց 3 որ առաջ, ծծմայր մերուների կերաբաժինը կիսով չափ պակասեցվում է, և 6-7 որվա ընթացքում մերուները փոխադրվում են վոչ ծնած մերուների նորմաներին:

5. Ծնելուց հետո 5-րդ որվանից ծծմայր մերուներն ամեն որ պետք է ոգտվեն զրոստնքից—առանց խոճկորների—1-2 ժամ տևողությամբ, ինչպես նաև հղի մերուները: Զրոսանքի համար ծծմայր մերուներին պետք է հատկացնել որվա ամենալավ մասը և ավելի հարմարեցրած փարախը (աղալը):

#### V. ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ծնելու 3-րդ որվանից բնի կերակրման բաժանմունքում դրվում են փոքր տաշտեր՝ մաքուր ջրով և հանքային կերերով (աղած չկավիճ, մանրած ածուխ, այրված վոսկը, մոխիր, մաքուր ձիմային հող):

Զուրը պետք է միշտ մաքուր լինի: Հանքային կերը և հողը նույնպես փոխվում են որական 2 անգամից վոչ սակագ: Ուստի պետք է նրանց շալ տալ քիչ-քիչ:

2. 10-15 որական հասակից խոճկորներին սովորեցնում են հատիկային կերերի: Դրա համար բներում կամ կերակրելու բաժանմունքում, մաքուր հատակի վրա շաղ են տալիս քիչ քանակով չորացրած կամ թեթե կերպով բոված յեգիպտացորեն, տարեկանի, զարու հատիկներ կամ վարսակի ձավար, ջարդած սիսու, վորպեսզի խոճկորները շուտ սօվորեն հատիկներ ուտելուն, ոդասկակար և հատիկների մի մասը, հատկապես սիսեար, թրջել աղաջը մեջ: Հենց վոր խոճկորներն սկսեն հատիկներ ուտելը, այդ

— 12 —

մոմինափից տաշտի մեջ յուրաքանչյուր որ քիչ-քիչ քանակով շար են տալիս զանազան հատիկներ, ջարդված դրությամբ, յերեքնուկի կամ առվույտի տերեւներ այնպես, վորպեսպի խոճկորները կարողանան միշտ ուտել այդ կերերը վորքան խոճկորները շուտ սովորեն հատիկային կերերին, այնքան հեշտ և հաջող կընթանանանց աճեցումը:

3. Հենց վոր խոճկորներն սկսեն ուտել չոր հատիկային կեր, բայց վոչ ուշ, քան 15-20 որական հասակը, պետք և սկսել նրանց կերակրել կաշայով՝ պատրաստված ջարդված հատիկի և այլ խտացրած կերի խառնուրդից: Կաշան յեփվում և սովորական յեղանակով՝ ինչպես մարդկային սննդի համար: Վորքան լավ և հսմեղ և պատրաստված այն, այնքան ավելի, հաճույքով և շատ են ուտում խոճկորները և այնքան արագ և ընթանում նրանց աճեցությունը: Կաշան տրվում և ստուծ կամ մի քիչ տաքացրած վիճակում որական 3 անգամ, մասն տաշտերի մեջ: Ամեն անգամ տաշտը թողնվում և խոճկորների մոտ 30 րոպեյով, վորից հետո հավաքում են, իսկ կաշայի մնացորդներով կերակրում մերուներին կամ ուրիշ ավելի մեծ, մորից կարած խոճկորներին: Կաշան խոճկորներին տալուց առաջ, շատ ոգտակար և, անգամ անհրաժեշտ, նրա մեջ ավելացնել թիթեռնածաղիկ խոտի այսուր և քիչ քանակով մանրած թարմ գազար և յեփած ու ջարդված կարտոֆիլ, իսկ ամառ ժամանակը գազարի և կարտոֆիլի փոխարին՝ մասն կտրտած, թարմ, հյութալի կանաչ խոտ—տովույտ, յերեքնուկ, յերիտասարդ յեղինջ և ուրիշ խոտեր:

4. Կաշա պատրաստելու համար պետք և ընդունել խտացրած կերերի խառնուրդի հետեւյալ կազմը.

Ջարդված վարսակ . . . . . 3 մաս

» գարի . . . . . 4 »

Կտավհատի քուսպ և թեփեր . . . . . 2 »

Ավելացրած թիթեռնածաղիկ խոտի

ալյուր . . . . . 1 »

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կաշայի մեջ ավելացվում և թարմ մանրացրած գազար և ջարդած յեփած կարտոֆիլ խոճկորների կենդանի քաշի յուրաքանչյուր կիլոգրամին տալով որական 10 դրամ: Գարնանը և ամառնը կաշայի մեջ տվելուցում են սկզբում այդ նույն քանակությամբ կանաչ խոտ, իսկ այնուհետև յուրաքանչյուր որ այդ խոտի քանակը ավելացրած և, և յերբ խոճկորները կընտելանան խոտ ուտելուն, խոտը նրանց տրվում և ցանկացածին չափ:

Կանոնավոր կերակրման ժամանակ, յուրաքանչյուր խոճկորների համար պահանջվում է խտացրած կեր որական՝

ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԵԼ	2-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	3-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	4-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	5-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	6-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	7-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ
ԶՈՐ ՎԻՃԱԿՈՒՄ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ	20 դր.	90 դր.	230 դր.	300 դր.	400 դր.	500 դր.
ԿԱՂԱՅԻ ՀԱՄԱՐ	15 >	50 >	120 >	280 >	290 >	350 >

5. Յեթե հսարավորություն կա խոճկորներին տալ քաշած կաթ, ապա կաթով կերակրելուն պետք և անցնել խոճկորներին հատիկային կերին անցնելուց հետո:

Յեթե կովերը հիփանդ չեն ախտով կամ ինֆեկցիոն վիճումով, կաթը պետք և տալ միշտ թարմ կամ թթվեցրած՝ մածնի ձեռվով: Պետք և սկսել վոչ մեծ քանակից՝ խիստ պահպանելով որական բաժինը: Զափից ավելի կաթ տալն անթույլատրելի յե: Տաշտերը խոճկորների մոտ յերկար ժամանակ չպետք և թողնել, հատկապես այն դեպքում, յերբ տրվում է թարմ, անարատ կաթ, այլ պետք և հավաքել նրանց 10-15 րոպեյից հետո: Կաթի մնացորդով կերակրում են մերունին, իսկ տաշտերը մաքուր լվացվում են և չորացրում արևի տակ: Խոճկորներին չի կարելի կերակրել այնպիսի կաթով, զորն սկսել և թթվել:

Կաթով կերակրելու գեպքում յուրաքանչյուր խոճկորի համար պետք և պահպանել կաթի որական հետեւյալ բաժինը.

ԽՈՃԿՈՐԻ ՀԱ- ՄԱԿ	2-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	3-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	4-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	5-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	6-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	7-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	8-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ	9-ՐԾ ՄԱՍ- ՆՈՐԺԱԿ
ՈՐՎԱ ԿԱԹԻ Քանա- կը 3-4 կերաբաժնի համար . . . . .	50 դր.	150 դր.	250 դր.	300 դր.	350 դր.	450 դր.	250 դր.	100 դր.

6. Խոճկորներին մորից կտրելը կատարվում և 2 ափսական հասակում: Դա պետք և կատարել աստիճանաբար 3-5 որում: Սկզբում անջաւում են ամենից ուժեղ և մեծացած խոճկորները, իսկ հետագայում, հինգ որից հետո՝ ավելի թույլերը: Մորից կտրելու ժամանակ խոճկորներին կերակրում են այնպիսի կերերով, վորոնցով նրանք կերակրվել են մոր տակ յեղած ժամանակ:

Անհրաժեշտ և մորից անջատելու առաջին տասնորյակում խոճ-

Կորներին տալ ամենահամեղ և սննդաբար կերեր, վորպեսզի ահա-  
ջատումն անցնի սահուն կերպով, առանց վնասելու խոճկորների  
աճումը: Այդ ժամանակ խոճկորներին պետք է տալ քաշած կաթի-  
կամ այլ կենդանական կերերի ուժեղ բաժիններ (մսոսկրային,  
ձկնեղեն, արյունի այլուր):

## VI. ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ՊԱՀԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

1. 5-10 որական հասակից, նույնիսկ տարվա ցուրտ ժամա-  
նակ, խոճկորները լավ և հանգիստ յեղանակին պետք և դուրս-  
արփեն բակը՝ զբոսանքի: Խոճկորներին ցրտին պետք և սովորեց-  
նել աստիճանաբար և գտուցությամբ: Առաջին որերին խոճկորնե-  
րին զուրս են հանում 5-10 րոպեյով, հետո աստիճանաբար զբո-  
սանքները յերկարացվում են, բայց այս դեպքում անհրաժեշտ ե-  
նետեև վորպեսզի խոճկորներն զբոսանքի ժամանակ շարունակ  
շարժման մեջ լինեն և վոչ թե մնան անշարժ վիճակում: Հենց  
վոր խոճկորներն սկսեն մրսել, նրանց խսկույն ներս են քշում  
խոզանոց:

2. Ամառը՝ տաք որերին, խոճկորներին յերկար չպետք և  
թողնել խիստ արևոտ տեղում, այլ նրանց պետք և պահել ստվե-  
րում—զով տեղում: Խոճկորները խիստ վնասվում են տաքություն-  
ից և արեի այրելուց:

3. յեթե խոճկորներին ամառը պահում են ազատ դրությամբ՝  
փարախներում, ծածկի տակ, ապա անհրաժեշտ ե խիստ հետեւել,  
վոր փարախները մաքուր լինեն: Հենց վոր փարախները կեղտոտա-  
վեն, առաջանա փոշի, փուսեր, պետք և փարախը փոխադրել թամր  
տեղ:

4. Խոճկորներին պետք և մաքրել և ժամանակ առ ժամանակ  
սրբել կոշտ շորով՝ ներծծված բուսական յուղով, ճարպով և կրեո-  
լինի մեկ տոկոսային լուծույթով:

5. Բժման համար նախատեսնված վարազիկներին պետք և  
ամործատման յենթարկել (կրտել) մոր տակ՝ 40 որական հստա-  
կում:

6. Ծծից կտրած խոճկորների խմբավորման ժամանակ պետք  
ե հսկել, վորպեսզի մեկ խմբի մեջ հավաքվեն միատեսակ հասա-  
կի, քաֆի և զարգացման խոճկորները: Ավելի թույլ խոճկորներին  
(կամ ավելի ուժեղներին) պետք և առանձնացնել և տեղափոխել  
իրենց ուժին և զարգացմանը համապատասխան խոճկորների այլ  
խմբեր, որպեսզի կանոնավորվի բոլոր խոճկորների ճիշտ կերակ-  
րումը:

## VII. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ—ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Խնչպես խողանոցում, նույնպես և նրա շուրջը պետք է  
պահպանել խիստ մաքրություն: Դրա համար՝ վորպես կանոն  
ա) ամեն որ առավոտներն ու յերեկոները պետք և մաքրվեն խո-  
ղանոցները: բ) Ամեն ամիս պետք և կրով սպիտակացվի բների  
պատերը, միջնապատերն ու առաստաղը: գ) Ապիտակացման  
ժամանակ մայրերին խոճկորների հետ դուրս են հանում զբունե-  
լու, իսկ վատ յեղանակներին սպիտակուցամբ պիտի կատարել  
հերթականությամբ, ընդվորում մայրերին խոճկորների հետ դուրս-  
են հանում կամ միջանցք կամ թե խոճերի «ճաշարան»-ը:

2. Գոմաղբը թափելու համար պետք և հատկացված լինի  
խողանոցից 25 մետր հեռավորությունից վոչ պակաս հատուկ  
ցանկապատաժ տեղ:

3. Վոչ մի դեպքում չի թույլատրվում խողանոցի շուրջը  
թափել գոմաղբ:

4. Պետք և ունենալ մշտական հսկողություն խողանոցի ըըր-  
ջապատի մաքրության վրա:

5. Խողանոցի շուրջը չպետք և լինի աղբ, թափթփուկներ,  
մարդկային արտաթորություններ, սատկած կենդանիների դիակ-  
ներ:

6. Ֆերմայում աշխատող խողապահնարի համար պետք և  
կառուցված լինի հատուկ զուգարան (արտաքնոց):

7. Խողանոցի առաջ և նրա շուրջը չպետք և լինեն անձրևա-  
ջլերի փոսեր: Այդպիսիների գոյանալուց՝ անհրաժեշտ ե անմիջա-  
պես զրանց վերացնել, իսկ գոյացած տեղը լինել խճով և ավա-  
զով կամ ուղղակի պինդ հողով և ամրացնել:

8. Մայրերին զբոսանքի հանելու ժամանակ, խողանոցները  
պետք և ոդափոխման յենթարկվեն վոչ միայն ոդափոխող խողա-  
վակների, այլ և լուսամուտների բացման միջոցով: Ցուրտ յեղա-  
նակին մայրերի և խոճկորների ներսում գտնված ժամանակ չի  
թույլատրվում բացել լուսամուտները խոճկորներին մրսեցնելուց  
խուսափելու համար:

9. Խոճկորների մասսայական վոչնչացման հիմական հիվան-  
դությունը հանդիսանում է լուծը: Լուծի զլիսավոր պատճառը  
կեղտն և ու խոճկորների վատ խնամքը:

10. Խոճկորներին լուծից պաշտպանելու համար անհրա-  
ժեշտ:

ա) Կերակրելուց անմիջապես հետո լվանալ և մաքրել խոճ-  
կորների տաշտերը:

բ) Վոչ մի գեղաքում չտալ վատ վորակի՝ (բորբոսնած) խտաց-  
բած կերպու և թժված կաթ:

գ) Մայրերին կերակրել կամ միջանցքներում, կամ ճաշաբաններում և կերակրի ամանները, չթղղնել բներում:

գ) Մոր կերպամանը նույնպես լվանալ, մաքրել և չորացնել արեի տակ:

ե) Այն բները, վորտեղ հանդս կդա փորլուծությունը, պիտք անջատվեն մյուս բներից:

զ) Բունը, վորտեղ հանդես ե յեկել փորլուծությունը, պետք ե անմիջապես ախտահանել և առանձնահատուկ ուշադրություն դարձնել կերի ամանների, հատակի և իրենց խաճկորների առջուր պահելու վրա:

б) Ուշադրությամբ հետեւի վորպեսպի բնի հատակի վրա,  
նույնպես և միզատար առվակներում մեղ (շոյա) չլինի. Յեթե  
մեղը չի հ ոսում, խոճկորները խօսւմ են այն, որ որն  
առաջացնում ե փորլուծություն. Յեթելուծը չի ընդհատ-  
վում, պետք ե դիմել անանաբուժին:

11. Դրսից բերվող բոլոր տեսակի վարակիչ հիվանդություններից խոճկորներին պաշտպանելու համար բոլոր կողմնակի և ֆերմաներում չաշխատող անձանց մուտքը խողանոցը վճռականապես պետք է արգելել:

12. Խողանոցի մուտքի առաջ պետք է պատրաստված լինի տախտակամած (պլողածակ) վրան կիր կամ ախտահանիչ լուծովյթ-անասնաբուժի ցուցմունքով, վորի վրա պետք է փունամաններն ախտահանել ամեն անգամ խողանոց մտնելուց առաջ, վորպեսզի խողանոց չտարպի վորեև վարակ:

13. Մշտական հսկողություն պետք է լինի խոճկորների և մայրերի վրա: Ցուրաքանչյուր տասնորյակում բոլոր խոզերը պետք է նայվեն անասնարուժական սահմանադրի կողմից:

14. Լավ պահելու և խնամելու ժամանակ, խռնկորների կոտորքերու զեպքում, անմիջապես պետք է հրավիրել անասնաբուժին:

### VIII. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Սերունդը մաքսիմալ չափով աճեցնելու և պահելու վճռական պայմանն ե հանդիսանում աշխատանքի ճիշտ կազմակերպումը։ Դրա համար խոզարուծական ֆերմայում պետք ե կազմակերպվի բըիգագ՝ կոլտնտեսականների մշտական կազմով և նրանց աշխատանքի վարձատրումը պետք ե կտարավի բըիգագային գործարքի հիման վրա։

2. Խողաբուծական բըիգադաները կազմակերպվում են մոտավորապէս 3 կոլտնտեսականներից բաղկացած խողապաների կազմով, վորոնցից մեկը հանդիսանում ե ավագը: Բըիգադաների համար պետք ե առանձնացնել ավելի փորձված և խողաբուծական գործը լավ իմացող կոլտնտեսականներին:

3. Անպատճախանալվությունը լիովին վերացնելու նպաւտակով, կերակրելու և խնամելու համար ամեն մի բրիգադի ամբացվում ե խողերի վորոշ խումբ, այն և մեկ վարազ, 21 մերուն. և ամբողջ սերունդը:

4. Բրիգադը պարտավոր ե իրեն ամբացը մերուներից ստացած սերունդն աճեցնել, նրա ծնվելու օրվանից սկսած մինչև պետությանը հանձնելու կամ հիմնական մայրական հոտը փոխադրելու ժամանակը:

5. Յուրաքանչյուր ըրիգագի համար կոլտնտեսության վարչության կողմից սահմանվում է արտադրական առաջադրանք՝ խոճկորների աճեցման և նրանց կենդանի քաշի աճի նորմաներ:

ՀԱԽՀ Հողգործկոմատի կողեզրայի 1933 թ. ապրիլի 11-ը  
վորոշման համաձայն հաստատված են խոճկորների աճեցման տա-  
ռեկան հետեւյալ նորմանները.

1. «Ապրանքային ֆերմաներում յուրաքանչյուր մերունի համար սահմանել միջին հաշվով 6 խոճկոր ամեցնելու տարեկան նորմա, իսկ ցեղական ապրանքային ֆերմաներում՝ վոչ պակաս 7-8 խոճկորներից».

2. Առաջին անգամ ծնող մերունի համար սահմանել խոճակը աճեցնելու տարեկան նորման՝ մեկ խոճկորով պակաս:

3. Բրիգադային գործարք մացնելու համար կոլտնտեսության  
վարչությունը պետք է սահմանի գործարքային գնահատում և  
բրիգադին գրանցվելիք աշխորերի քանակը՝ արտադրական առա-  
ջարարանքն ամբողջությամբ կատարելու համար:

4. Շարքային խողապահների աշխատանքը վերաբերվում է 3-րդ խմբին 1,0 աշխատանքելով, իսկ ավագ խողապահներին՝ 4-րդ խմբին 1,25 աշխատանքելով որպա արտադրանքի նորմայի համար։

5. Արտադրանքի միավորի գործարքային գնահատումները սահմանվում են, յեներով խողապահների աշխատանքը լիմբեր վերածելուց և խոճկորների աճման նորմաներից: Շարքային խողապահի աշխատանքը 1 աշխոր, իսկ ավագ խողապահները՝ 1,2 աշխոր գնահատելու ժամանակ, արտադրանքի որական նորմայի համար և մեկ մերունից 6 խոճկոր աճեցնելու նորմայի դեպքում:

յուրաքանչյուր խոճկորը 60 կիլոգրամ քաշով (կամ բրիգադի համար 126 խոճկոր՝ 75,6 ցենտներ քաշով), դործարքային զնահատումները լինելու յեն հետևյալները՝

ա) Կենդանի ծնված յուրաքանչյուր խոճկորի համար բրիգադին գրանցվում է 1,30 աշխոր, վորից շարքային խոզապաններին յուրաքանչյուրին գրանցում են 0,40 աշխոր, ավագ խոզապանին (բրիգադիրին) 0,50 աշխոր:

բ) Մինչև ծծից կտրելը պահպանած յուրաքանչյուր խոճկորի համար գրանցում են 2,60 աշխոր, վորից շարքային խոզապանների յուրաքանչյուրին 0,80 աշխոր, ավագ խոզապանին 1 աշխոր:

գ) Մինչև 4 ամսական հասակը պահպանած յուրաքանչյուր խոճկորի համար բրիգադին գրանցում են 1,60 աշխոր, վորից շարքային խոզապաններին յուրաքանչյուրին 0,50 աշխոր, իսկ ավագ խոզապանին (բրիգադիրին) 0,60 աշխոր:

դ) Կենդանի քաշի յուրաքանչյուր ցենտներ արտադրանքի համար բրիգադին գրանցում են 6,50 աշխոր, վորից շարքային խոզապաններին 2-ական աշխոր, իսկ ավագ խոզապանին (բրիգադիրին)՝ 2,50 աշխոր:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**—Այն գեպքում, յերբ բրիգադիրը և փերմայի վարիչը փերմայում աշխատում են 2-րդ տարին, նրանց աշխատանքի գնահատումը համապատասխանաբար բարձրացվում է մեկ խմբով:

6. Յեթե մերունների քանակին ապահովում է միայն մեկ խոզապանի բեռնվագությունը (որինակ՝ 7 մերուն), ապա այդ գեպքում արտադրանքի միավորի գնահատումը (ձագ և նրա քաշը) պետք է բարձրացվի 3 անգամ, իսկ յեթե կա 2 խոզապանի բեռնվագություն (որինակ՝ 14 մերուն), ապա գնահատումը պետք է բարձրացվի 1,5 անգամ վերև հիշված գնահատության համեմատությամբ, շարքային խոզապանների համար 21 մերուն լինելու գեպքում:

7. Սահմանված նորմաններից ավել ստացված խոճկորների սահմաններում, նայած ավելի ստացած խոճկորների քանակին, արվում ե տվյալ բրիգադի կոլտնտեսականներին վորպես պարզեատրում:

8. Նատուրալ պարզեատրումը բրիգադին հանձնում է կուտանսելիքան վարչությունը՝ մատղաշների անեցման և պահպան տարեկան արտադրական առաջադրանքը լիովին կատարելուց հետո՝ 2 ամսականից վոչ ավել հասակ ունեցող խոճ-

9. Նատուրալ պարզեատրումների հետ միասին պետք է լիւթին պահպաններ խոզաբուծական բրիգադաների հավելյալ գրամական վճարումները՝ ապրանքային ֆերմաներում տարեկան նորմայից ավել զուգավորած յուրաքանչյուր մերունի համար 1 ոռութիւն և մինչև յերկու ամսական հասցրած ամեն մի խոճկորի համար 1 ոռութիւն և միզական ապրանքային ֆերմաներում զուգավորած յուրաքանչյուր մերունի համար 1 ոռութիւն և 1 կարգի յուրաքանչյուր խոճկորի համար 2 ոռութիւն, 2-րդ կարգի խոճկորի համար 1-ական սուրբի և առաջին կարգից բարձր յուրաքանչյուր խոճկորի համար՝ 4 ոռութիւն:

10. Պարզեվատրման 25.0%-ը վճարվում է մերունների զուգավորման ժամանակ, իսկ 75.0%-ը հաջող կերպով ծնեցնելուց հետո:

11. Տարեկան արտադրական առաջադրանք կատարված է համարվում, յերբ խոզաբուծական բրիգադան իրեն հանձնած մերուններից ստացած խոճկորներն աճեցրել ե մինչև ապրանքային յելքի հանձնումը կամ մինչև խոճկորներին մերունների հիմնական հոտը փոխանցելը:

Համաձայն ՀՍԽՀ Հողժողկոմատի 1933 թ. հունիսի 25.ի վորոշման անասնապահական կոլտնտեսական ապրանքային ֆերմաններում մատղաշների սատկումների առթիվ սահմանված է տույժ հետեւյալ չափանիշներով:

Մինչև 2 ամսական հասակ ունեցող յուրաքանչյուր առաջին սատկած խոճկորի (գոճի) դիմաց, այն կոլտնտեսականից, վորի հանցանքի հետևանքով սատկել և խոճկորը, նրա հասանելիք աշխարհերից պահել մեկ աշխոր (տույժ), յերկրորդ սատկածի դիմաց՝ մինչև 2 աշխոր, իսկ յերրորդ և ավելի սատկումների դիմաց—վոչ պակաս 3 աշխորըց:

Յերկու ամսականից բարձր հասակ ունեցող յուրաքանչյուր սատկած խոճկորի դիմաց հետ պահել վոչ պակաս 8 աշխորից:

2. Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին և ֆերմանների վարիչներին յուրաքանչյուր անգամ սատկած մատղաշների համար մանրակրկիտ քննություն կատարել և պատճառներն ու հանցավորներին և վերջինների նկատմամբ, քացի նախատեսված տույժից յենթարկել նաև դատական պատասխանատվության:



21.315

3-36352

ԳԻՆԸ 40 ԿՐՊ.

104



в ПНГР  
1934 г.  
АК № 13

## НАРКОМЗЕМ ССРА

## Агротехпроп и животноводственный сектор

## **Инструкция по сохранению и выращиванию поросят при весенне-летних опросах**

Сельхозгиз

1933

## Эривань